

ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ

ՓՈԽԵԼ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ԸՆԹԱՅԸ

Քառասնորեայ Պահեցողութեան ժամանակ, ամենօրեայ դրուժեամբ եկեղեցի գալը ու քարոզ լսելը օգուտ մը բերելու փոխարէն՝ դատապարտութիւն կը բերէ մեզի, եթէ երբեք չփոխուի մեր կեանքի ընթացքը: Եթէ դու քեզ որոշ կերակուրներէն եւ գինիէ հեռու պահեցիր, բայց վարք ու բարքիդ մէջ նոյնը մնացիր՝ բանով մը չես օգտուիր: Եթէ ճշմարիտ պահք պահող ես, պէտք է դադրեցնես բարկութիւնը եւ դառնաս ազնիւ, պէտք է դադրեցնես անզթուժիւնը եւ դառնաս սիրալիր: Ա՛յս է ճշմարիտ պահքը որ քեզ երկինք կը բարձրացնէ:

(Մեծն Բարսեղ)

ՊԱՅԸՆ ՄԻԱՅՆ ՈՒՏԵԼԻ՞Ք Է

Միայն բերանդ պահք թող չպահէ, այլ նաեւ՝ աչքերդ, ականջներդ, ոտքերդ, ձեռքերդ եւ մարմինիդ բոլոր անդամները: Թող ձեռքերդ պահք պահեն՝ հեռու կենալով կողոպուտէ ու ազահուլթենէ: Թող ոտքերդ պահք պահեն՝ հեռու մնալով աղտոտ տեղեր երթալէ: Թող ականջներդ պահք պահեն՝ հեռու մնալով չարախօսութիւններ լսելէ: Թող աչքերդ պահք պահեն՝ հեռու մնալով գեղեցիկ դէմքերու անմաքուր նայուածքներ ուղղելէ: Նայիլը պտուղն է աչքերուն, բայց եթէ արգիլուած բաներու նայինք՝ կը քանդուի մեր պահեցողութիւնը եւ կը վտանգուի մեր հոգիի ապահովութիւնը: Բայց եթէ աչքը մաքուր կերպով նայի ամէն բանի՝ կը գորացնէ մեր պահեցողութիւնը:

(Յովհաննէս Ոսկեբերան)

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵԱ...

Երբ կ'ուզես գիտնալ, թէ Աստուած ի՞նչպէս կը վարձատրէ արդար, կարդանք Սաղմոս 1

Երանի անոր, որ անբարիշտ մարդոց խորհուրդին չի հետեւիր, մեղաւորներու ապրելակերպը չ'ընդօրինակեր եւ զԱստուած ծաղրողներուն հետ ընկերութիւն չ'ընէր, այլ՝ հաճոյք կ'առնէ ՏԻՐՈՋ Օրէնքէն, եւ անոր Օրէնքը կը սերտէ գիշեր ու ցերեկ:

Անիկա կը նմանի հոսող ջուրերու կողքին տնկուած ծառին, որ ճիշդ ժամանակին իր պտուղը կուտայ եւ որուն տերեւները չեն չորնար բնաւ: Անոր բոլոր գործերը յաջողութեամբ կը պսակուին:

Բնաւ այսպէս չեն ամբարիշտներն՝ այլ՝ կը նմանին յարդին որ հովը կը տարտղնէ:

Անոր համար ալ ամբարիշտները Աստուծոյ դատաստանէն պիտի չագատին, մեղաւորները արդարներու կարգին պիտի չդատուին. որովհետեւ ՏԷՐԸ կը ճանչնայ արդարներու ճամբան, մինչ ամբարիշտներու ճամբան զիրենք կորուստի պիտի տանի:

Փառք Հօրը Որդիին եւ Սուրբ Հոգիին Այժմ եւ յաիտեան. Ամէն:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ: Նաեւ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարգալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ՔՈՒ ԽՍՐԷՂ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 15 ՄԱՐՏ 2020 ԹԻՒ 11

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ետայի 56. 1-57.21: Եփ. 4.17-5.14
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍ 16.1-31

Դ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ՏՆՏԵՍԻ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 16.1-31

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տընտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին ըսելով, թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Զեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Տնտեսը ինքնիքէն խորհեցաւ. «Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ, թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուներէն ներս»: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. «Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Ան պատասխանեց. «Երկու հարիւր թիթեղ ձէթ»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր»: Յետոյ հարցուց միւսին. «Դ՞ո՞ւն որքան պարտք ունիս»: Ան պատասխանեց. «Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն»: Տնտեսը ըսաւ. «Ահաւասիկ պարտամորհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն»: Տէրը ասիկա լսելով գովեց անիքաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ անելի ճարտիկ են քան՝ լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի. Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաիտեանական յարկերու մէջ ընդունին:

**ԵԱՍՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
56.1- -57.21**

Տէրը այսպէս կ'ըսէ. «Իրաւունքը յարգեցէ՛ք եւ արդարութիւն ըրէ՛ք, որովհետեւ ահա մօտեցաւ ժամանակը երբ պիտի փրկեմ ձեզ, հասաւ ժամանակը երբ պիտի ողորմիմ ձեզի»:

Երանի այն մարդուն, որ արդարութիւն կ'ընէ եւ իրաւունքը կը յարգէ, իմ Շաբաթներս կը պահէ եւ չի պղծեր գանձնէ՛ք եւ կը դադրի անիրաւութիւն գործելէ»:

Տիրոջ հաւատացած ռեւէ օտարագգիթող չխորհի եւ չըսէ. «Տէրը զիս իր ժողովուրդին մէջ պիտի չընդունի», եւ ռեւէ ներքինի թող չմտածէ, ըսելով. «Նս անպտուղ ծառ մըն եմ, Տէրը զիս չ'ընդունիր»:

Տէրը այսպէս կ'ըսէ. «Այն ներքինիները որոնք իմ Շաբաթներս կը պահեն, կ'ընտրեն այն բաները զոր ես կ'ուզեմ եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, իմ տանս եւ իմ ժողովուրդիս մէջ աւելի լաւ տեղ եւ պատիւ պիտի տամ անոնց, քան իմ որդիներուս եւ դուստրերուս. անոնց պիտի տամ յաւիտենական պատիւ մը որ բնաւ պիտի չչնջուի»:

Իսկ այն օտարագգիները որոնք ինձի հաւատացին ինձի ծառայելու համար եւ իմ անունս սիրեցին՝ ինձի ծառայ եւ աղախին ըլլալու համար, եւ բոլոր անոնք՝ որոնք իմ Շաբաթներս կը պահեն եւ չեն պղծեր, եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, զանոնք իմ սուրբ լեռնս պիտի տանիմ եւ զիրենք պիտի ուրախացնեմ իմ աղօթքի տանս մէջ. պիտի ընդունիմ իմ Սեղանիս վրայ իրենց մատուցած ողջակէզներն ու գոհերը, որովհետեւ իմ տունս աղօթքի տուն պիտի ըլլայ բոլոր հեթանոսներուն համար»:

**Շարունակել եւ ամբողջացնել
Աստուածաշունչէն**



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՆՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ**

4.17- -5.14

Արդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի. չըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին որով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է, իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյսը չունին, իրենք զիրենք անառակութեան տրւած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյագօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի, թէ այդ չէ՛ Բրիստոսի ցամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք, թէ Յիսուսի մէջ է ցշմարտութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին իմբնութիւնը, այսինքն ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապակաւած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով եւ եղէք նոր մարդ մը, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած եւ ապրեցէ՛ք ցշմարիտ կեանքը, արդարութեամբ ու սրբութեամբ: Հետեւաբար ստախօսութենէն հրաժարեցէ՛ք: «Ամէն մարդ ցշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Բրիստոսի միացած ըլլալով՝ իրարու անդամներ ենք: Եւ, ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ. «Նոյնիսկ երբ բարկանաք՝ չըլլայ որ մեղանչէ՛ք». եւ բարկացած չմնաք միմեծի իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք Աստուծային:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
Ս. ՅՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ**

Ս. Յովհան Օձնեցի հայ եկեղեցւոյ փառքերէն մէկն է: Ան կաթողիկոսական աթոռ կը բարձրանայ (717-728) յաջորդելով Եղիա Արմիշեցի կաթողիկոսին:

Ս. Յովհան Տաշիրք գաւառի Օձուն գիւղէն է եւ աշակերտը՝ Թէոդորոս Քոթեմաւորին, որ իր ժամանակի ամէնէն նշանաւոր աստուածաբաններէն եղած է: Կ'ենթադրուի, թէ ան հելլենական ուսումնարանի մը մէջ կրթուած էր: Իբրեւ իմաստուն հովուապետ, իր կաթողիկոսութեան տարիներուն ընթացքին հեռու կը մնայ յունասեր միտումներէ, թէ՛ վարդապետական մարզին մէջ եւ թէ՛ քաղաքական ուղղութեան վրայ: Ան իր շնորհները լաւագոյնս կ'օգտագործէ իր պաշտօնին բովանդակ տեսողութեան ընթացքին եւ երկրին քաղաքական պատեհութենէն օգտուելով՝ ազգային եկեղեցւոյ կազմակերպութիւնը հաստատուն հիմքերու վրայ կը դնէ: Իր այդ քաղաքականութեան առաջին պտուղը կ'ըլլայ Էօմէր ամիրապետէն խնդրել, որ քրիստոնեաները չընադատուին իրենց հաւատքը փոխելու, եկեղեցիներէն հարկ չպահանջուի եւ քրիստոնէական պաշտամունքը ամէն տեղ ազատօրէն կատարուի:

Իր հայրապետութեան երկրորդ տարին, Դուինի մէջ կը գումարէ եկեղեցական ժողով մը, որուն ներկայ կը գտնուին աւելի քան 30 եպիսկոպոսներ:

Ժողովի ընթացքին կը խօսի իր նշանաւոր ատենաբանութիւնը, որ կը սկսի «Համբերողացն նախատիպ մեծն Յովք» բառերով:

Այս ժողովին կը սահմանուին երեսունեօթը կանոններ: Բացի այս կանոններէն, Օձնեցի Հայրապետ եկեղեցական կանոններ կը հաւաքէ եւ կը կազմէ առաջին հայ կանոնագիրքը, որ ժամանակի ընթացքին հետզհետէ կը կատարելագործուի:

Ս. Յովհան Օձնեցի կը յատկանշուի աղանդաւորներու դէմ իր մղած պայքարով եւ այս տեսակետով յաւետ պիտի մնան իր «Ընդդէմ երեսութեանաց» եւ «ընդդէմ Պաղիկեանց» գրութիւնները: Ան նաեւ ժամագիրքի կարգաւորիչներէն մէկը եղած է, գրելով «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» գիրքը, «Աւագ Ուրբաթ»ի շարականները, «Մեղաք յամենայնի»ն եւ ուրիշ գործեր:

Ս. Յովհան Օձնեցի իր կեանքի վերջին հանգրուանին Սոթեր լեռան վրայ իր կառուցած եկեղեցւոյ մէջ նգնական կեանքի կը նուիրուի «պահօք, աղօթիւք եւ տփնութեամբ» եւ «խաչաչարչար նգնութեամբ», իրեն ընկերակից ունենալով Գէորգ Մփանչյազարծ եւ Մատթէոս Խոտանարակ վարդապետները:

Ս. Յովհան Օձնեցի Հայրապետ կը վախճանի 728-ին: Անոր բարձր իմաստութեան եւ սրբութեան համբաւը միշտ վառ կը մնայ յաջորդ սերունդներու սրտին մէջ:

**ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆԸ ԱՌԱՆՅ
ՎՐԱՏԵԼՈՒ**

Վայ ինձի, Տէր, որովհետեւ տարակուսանքի ծփանքը կը պատէ զիս եւ կ'ալեկոծէ սիրտս: Չեմ գիտեր, թէ ինչ աղօթեմ: Կը սաղմոսեմ եւ չեմ հասկնար, շրթներս լոկ կը բառբառեն, իսկ միտքս ճողոպրելով հոս ու հոն կը թափառի. չենթարկուիր կամքիս ու չի հանդարտիր, աներեւոյթ կը շրջի եւ անորսալի կը մնայ: Կը շարչարուիմ ու չեմ օգտուիր, պղինձի ու ծնծղայի ձայնի պէս թափուր եւ ունայն կը համարուիմ եւ անպտուղ կը մնամ բոլոր բարիքներէն:

Ս. Եփրեմ Ասորի